ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՄԱՐՏԻ 2018թվականի N 12

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 29-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի գլխավոր հատակագծի նախագծի վերաբերյալ» N3 եզրակացությունը, Դդմաշեն համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 26-ի «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 11 որոշումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 05-030-0280-0002 ծածկագրով անտառային նշանակության հողերից 0.34852 հա առանձնացնել և փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման նպատակով՝ համաձայն համայնքի գլխավոր հատակագծի:

2. Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել համայնքի հերթապահ էլեկտրոնային քարտեզում և ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան
2. Թադևոսյան Գառնիկ
3. Կիրակոսյան Հրահատ

4. Հովհաննիսյան Գուրգեն

5. Ղարիբյան Էդիկ

6. Մելքոնյան Զավեն

7. Սարգսյան Ժաննա

Համայնքի ղեկավար՝ **Ավետիս Ավետիսյան**